

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻԶԱՆՑՔ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՍՏԱՆԻՑ

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԵՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՏԵՂ ԶԱՆՔԵՐՈՎ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՆՈՒԹՅԱՆ ԶԵՎՎՈՐՈՒՄ Է

Օգոստոսի 8-ին Վաշինգտոնում, ԱՄՆ նախագահի միջնորդությամբ եւ մասնակցությամբ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի կողմից ստորագրվեց Հայաստանի եւ Ադրբեջանի համատեղ Հռչակագիրը, որը նախատեսում է ոչ միայն կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնում, հաղորդակցության ուղիների եւ մի շարք այլ հարցերի կարգավորում, այլև տարածաշրջանում ուժերի նոր հարաբերակցության ձևավորում: Հուշագրի ստորագրումը լայն արձագանք է առաջացրել աշխարհում, բնականաբար՝ նաև Հարավային Կովկասի երկրների միջև «միջանկյալ օղակի» դեր կատարող Վրաստանում:

Մասնավորապես, Վրաստանի փորձագետների եւ քաղաքագետների շրջանում հատուկ ուշադրության կենտրոնում է Հռչակագրի 4-րդ կետը, որը նախատեսում է «Զանգեզուրի միջանցք» նախագծի գործարկումը (ըստ փաստաթղթի, պաշտոնական անվանումն է՝ «Թրանսփի ուղին դեպի միջազգային խաղաղություն եւ բարգավաճում» (TRIPP): Առանձնակի շեշտադրվում է այն հարցը, թե, Հռչակագրի կետերի իրացման դեպքում, ի՞նչ հեռանկարներ կունենա Վրաստանը՝ որպես մի երկիր, որի տարածքով են անցնում Եվրոպան ու Ասիան կապող միջազգային հաղորդակցությունները (նավթամուղներ, գազատարներ, մայրուղիներ, երկաթուղիներ...), եւ որին հաճախ անվանում են «Միջին միջանցք» ու «Մետաքսի ճանապարհ»: Ըստ վրացական մամուլի, Հռչակագիրը ցույց կտա միջազգային եւ տարածաշրջանային հարաբերությունների ապագա զարգացումը, թեպետ նշվում է, որ միջնաժամկետ հեռանկարում, նախագիծը չի կարողանա մրցակցել Վրաստանի տնտեսական եւ տարանցիկ շահերի հետ:

Ստորեւ ձեռ ուշադրության ենք ներկայացնում հայ-ադրբեջանական Հռչակագրի ստորագրման հարցով ճանաչված կովկասագետ, Թբիլիսիի «Կովկասի հետազոտական կենտրոն»-ի տնօրեն Մամուկա Արեշիձեի հետ «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրյանի զրույցը, ինչպես նաև վերոնշյալի կապակցությամբ վրացական մամուլի արձագանքը:

- Վաշինգտոնում ԱՄՆ նախագահի միջնորդությամբ Հայաստանի վարչապետի ու Ադրբեջանի նախագահի ստորագրած Հռչակագիրը առաջին հերթին, ուղղված է Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության թուլացմանը: Այն ուղղված էր նաև տարածաշրջանում խաղաղարար գործընթացին ԱՄՆ-ի ներգրավմանը: Նշանակալի է նաև երրորդ հանգամանքը. տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը փոխվում է, ներկայումս ձեւավորվում է ուժերի նոր հարաբերակցություն: Սակայն, այն փոխվում է Հարավային Կովկասի երկրների համար եւ ոչ թե նրանց միջև հարաբերությունների տեսանկյունից, նրանից, թե վաղը ի՞նչ կարող է տեղի ունենալ Սեւ ծովի եւ Կասպից ծովի միջև ընկած տարածաշրջանում: Եթե հաշվարկենք անցյալ դարի 90-ական թվականներից, ապա Հարավային Կովկասի ձեւավորված բոլոր երեք երկրներում կողմնորոշումը տարբեր է: Ադրբեջանը կողմնորոշված է Թուրքիայի կողմը, Հայաստանը՝ Ռուսաստանի, իսկ Վրաստանը՝ Արեւմուտքի: Բացի այդ, Հարավային Կովկասում իրենց շահերն են հետապնդում գերտերություններ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Եվրամիությունը: Ակտիվություն են ցուցաբերում նաև տարածաշրջանային այլ երկրները՝ Թուրքիան ու Իրանը, եւ վերոնշյալ այդ երկրների ակտիվությամբ ձեւավորվեց ուժերի որոշակի հավասարակշռություն, որի հետեւանքը տարածաշրջանային հակամարտությունն է, ու գերտերություններից եւ ոչ մեկը չափազանցված չէ այն կարգավորել: Բոլորին ձեռնտու է տարածաշրջանում լարվածության պահպանումը, հակամարտության սառեցումը, ինչը կնպաստեր տարածաշրջանում իրենց ազդեցության պահպանմանը:

Ավելացնենք, որ, ելնելով տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիրքից, ավելացան գործող նոր դեմքեր՝ ակտիվացան Չինաստանն ու Արաբական աշխարհը: Այդ երկրները գործում են տարածաշրջանի հասարակության վրա ազդեցության ոչ միայն դիվանագիտական մեթոդներով, այլև այսպես կոչված, «փափուկ ուժով»՝ տարբեր կազմակերպությունների միջոցով: Դրանք հասարակական կազմակերպություններ են, տնտեսական, եւ, ամենակարեւորը՝ կրոնական-քաղաքական:

Սակայն վերջին տարիներին Ռուսաստանի եւ Արեւմուտքի հարաբերությունների սրումը, առանձնապես՝ ուկրաինական հակամարտությունը, որոշակիորեն փոխեց ուժերի հարաբերակցությունը եւ ոչ միայն մեր տարածաշրջանում: Ուկրաինական հակամարտությունը պայմանավորեց համաշխարհային կարգի խախտումը, այն դարձրեց գոյություն ունեցող այն տեսքով, որին մենք ծանոթ ենք՝ սկսած 1945 թվականից: Հիմա գտնվում ենք համաշխարհային հին կարգի վերացման եւ նորի ձեւավորման փուլում: Ձեւավորվում են խաղի նոր կանոններ, այդ թվում՝ նաև Հարավային Կովկասում: Ռուսաստանը, որը գրեթե երեք դար պայքարում էր Հարավային Կովկասում իր գերազդեցության հաստատման համար, վերջին հինգ-տասը տարվա ընթացքում թույլ տված լուրջ վրիպումների արդյունքում այդ ամենը զրոյացրեց:

Ռուսաստանի խոշոր սխալներից մեկն այն էր, որ անցյալ դարի 90-ական թվականների սկզբներին գո-

հաբերեց իր ամենակայուն կողմնակիցներից մեկին՝ Վրաստանը, այն ժամանակ, երբ Ադրբեջանի հետ մշտապես գտնվում էր «խաղային» պայմանակարգում, զբաղեցնում էր զիջողական դիրքորոշում, միշտ ձգտում էր Ադրբեջանի հետ ունենալ բացառիկ հարաբերությունների համակարգ: 2008 թվականին Ռուսաստանը Վրաստանից բռնազավթեց մեծ տարածքներ, իսկ 2010-ին նշանակալի տարածքներ զիջեց Ադրբեջանին փոխանցելով Դաղստանի տարածքում գտնվող չորս գյուղերը: Նշեք նաև, որ Ադրբեջանի ղեկավարությունը միշտ ձգտում էր Ռուսաստանի ցայտուն միջոցով լինել բարյացակամ ու զգուշավոր դիվանագիտությամբ պահպանում էր բարիդրացիական հարաբերություններ: Օրինակ, մինչև 2022 թվականը, երբ Ռուսաստանը Ուկրաինայում սկսեց ռազմական գործողություններ, Ալիևը կարողացավ Ռուսաստանի հետ ստորագրել բարեկամության պայմանագիր: Դրանից հետո սկսվեց դիվանագիտությունը Հայաստանի հետ: Վրաստանից հետո, Ռուսաստանը խոշոր վրիպում թույլ տվեց այն ժամանակ, երբ Ղարաբաղյան հակամարտության ընթացքում գրավեց չեզոք դիրք: Դա Ռուսաստանի երկրորդ խոշոր սխալն էր եւ, որքանով տեղեկացված են, Կրեմլյան խոհանոցի տրամադրություններից, հիմա լիովին գիտակցում են թույլ տված սխալի նշանակությունը, մեղադրում հատուկ ծառայություններից մեկի ղեկավարին ներկայացրած թյուր տեղեկատվության համար: Ռուսները Ադրբեջանի նկատմամբ զգալի հարցերում շատ ներողամիտ էին: Օրինակ, 2008-ին ագրեսիվ արձագանքեցին վրացական կողմի գործողությունների արդյունքում ռուս խաղաղարարների զոհվելու փաստին (թեպետ, մինչ այդ զոհվել էին նաև վրացի զինվորականներ), իսկ երբ Ղարաբաղում ադրբեջանցիները զցեցին ռուսական ուղղաթիռը, զոհվեցին ռուս զինծառայողներ, մոռացության մատնեցին: Եվ միայն նրանից հետո, երբ Ադրբեջանը համոզվեց իր բացառիկության մեջ, սկսեց ցուցադրել իր իրական շեշտումը, Ռուսաստանը որոշակիորեն փոխեց իր դիրքորոշումը:

Ինչ վերաբերում է Վաշինգտոնում ստորագրված Համաձայնագրին, ապա դա եւս լրացուցիչ ազդակ է, որ Ռուսաստանը հեռանալու է Հարավային Կովկասից: Սակայն, իմ խորին համոզմամբ, Ռուսաստանն այսքան հեշտ չի հեռանա Հարավային Կովկասից, Ռուսաստանը փորձում է շտկել վիճակը, թեպետ, նա արդեն ուշացել է, եւ սա կարող է կապված լինել դիվանագիտության, պատերազմի հետ: Հիմա Ռուսաստանի ձեռքերը կապված են ուկրաինական հակամարտությամբ, սակայն ինչպիսին կլինի իրավիճակը վաղը՝ չգիտեմ: Ռուսաստանի կայսերական մոտեցումն այնպիսին է, որ այն ոչինչ չի զիջում ու ներում: Զիջողականությունը կայսրության թուլության նշանն է: Եթե վերլուծենք պատմական փաստերը, ապա կտեսնենք, որ ցանկացած զիջողականություն, պարտությունը՝ Դրիմի պատերազ-



մում (1855թ.), ճապոնիայի դեմ պատերազմում (1905թ.), Առաջին համաշխարհային պատերազմում (1914թ.), վերջապես, անցյալ դարի 80-ական թվականներին՝ Աֆղանստանում, լուրջ հիմնախնդիրներ ստեղծեցին Ռուսաստանի, ապա նաև Խորհրդային Միության ղեկավարների համար: Հետեւաբար, Պուտինը հնարավոր ամեն ինչ կանի Հարավային Կովկասում իր դիրքերը պահպանելու համար:

Այսպիսով, ստացվում է, որ մեր տարածաշրջանը վերածվել է գերտերությունների շահերի բախման տարածքի: Նման պայմաններում Հարավկովկասյան երեք պետությունների փրկությունը ուժերի նոր հավասարակշռված համակարգի առաջարկումն է մյուս երկրներին: Իսկ դրա համար կապահանջվի ուժերի գերլարում, համատեղ աշխատանք: Թե դա որքանով կհաջողվի, դժվար է ասել, քանի որ կապահանջվի քաղաքական հեռատեսություն, քաղաքական կամք, քաղաքական ճկունություն: Եվ դրանում պետք է համոզեն Ամերիկայի Միացյալ Նահանգներին, քանի որ ներկա դրությամբ այն ամենաազդեցիկ երկիրն է: Այս փուլում այսպես է, վաղը կարող է ուրիշ կերպ լինել:

Մասնավորապես, այլ իրավիճակում, երբ գոյություն ունի այնպիսի հզոր ուժ, ինչպիսին է քաղաքական իսլամը, շատ դժվար կլինի պահպանել ներկայիս վիճակը: Ի դեպ, քաղաքական իսլամի հարվածի առաջին օբյեկտը Ադրբեջանն է, քանի որ քաղաքական իսլամի համար գլխավոր թշնամին չափավոր իսլամը ներկայացնող կառավարությունն է: Ընդ որում, կովկասյան չափավոր իսլամի դեմ պայքարը մուսուլմանական իսլամի կողմից, ընթանում է Կովկասի ողջ ծավալով: Դրա համար էլ շատ լուրջ մարտահրավեր է, եւ, կարծում են, միայն ու միայն այն դեպքում կլինի հավասարակշռվածության հաստատում ու պահպանում, եթե համապատասխանաբար՝ երեւանը, Բաքուն ու Թբիլիսին մտածված գործեն:

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ՝ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻԶԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

ՆՈՂԱՐ ԿԱՊԱՆԱԶԵ. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՄՊԱՌՆԱԼԻՔ ԶԷ»



Փորձագետ Նողար Կապանաձեն կարծում է, որ Զանգեզուրի նախագիծը սպառնալիք չի ներկայացնում, բայց Վրաստանը պետք է զգույշ լինի:

- Ընդհանուր առմամբ, շատ դժվար է ասել, թե ինչ կլինի ապագայում, եւ Զանգեզուրի միջանցքը որքանով կարող է այլընտրանքային երթուղի լինել Վրաստանի համար: Արեւելքի եւ Արեւմուտքի միջև հարաբերությունների ներուժն այնքան մեծ է, որ այն կարող է հեշտությամբ բավարարել Զանգեզուրի միջանցքը եւ վրացական երթուղիները միաժամանակ: Ամփոփելով այս փաստը՝ այն մեծ սպառնալիք չի ներկայացնում մեր աշխարհատնտեսական շահերի համար, բայց մենք միշտ պետք է զգույշ լինենք,- նշում է Կապանաձեն:

ԹԵՅՄՈՒՐԱԶ ԶԱՔՐԱԶԵ. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻԶԱՆՑՔԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ ԱՆՀԱՆԳՍՏԱՆԱԼ ՊԵՏՔ ԶԷ»



Համաձայն «Հաներաշխ գլոբալացման եւ կառավարման ինստիտուտի» տնօրեն Թեյմուրազ Զաքրաձեի՝ Զանգեզուրի միջանցքի գործարկումից անհանգստանալ պետք չէ, քանի որ դրա զարգացման շնորհիվ, «Մետաքսի ճանապարհը» չի կորցնի իր նպատակն ու գործառնությունը:

- Այս ամենն այսօր աշխարհաքաղաքական ենթադրություններ են, ուստի, չարժե չափազանց հոռետես լինել դրա վերաբերյալ: «Մետաքսի ճանապարհն» ավելի հզոր է, լուրջ աշխարհաքաղաքական կարգ է, քան Զանգեզուրի միջանցքը: Այլ կերպ ասած՝ ես այդքան էլ չեմ անհանգստանա TRIPP-ի համար,- ասում է Թեյմուրազ Զաքրաձեն:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔ. ՀԱՅԱՑՔՔ ՎՐԱՍՏԱՆԻՑ

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ՝ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

ՍԱՆԴՐՈ ԹՎԱԼԵՐԵԼԻԶԵ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ԿՈՐՑՐԵԼ ՈՐԵՎԷ ՄԻՋԱՆՑՔ ՈՒ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹՅՈՒՆ»



Քաղաքագետ Սանդրո Թվալերելիի համոզմամբ, Վաշինգտոնում ստորագրած համաձայնագիրը, իրոք, պատմական է, ինչը ողջունելի է:

- Ես ո՛չ առաջինն եմ, ո՛չ էլ՝ վերջինը, ով ասում է, որ նախագահ Թրամփի միջնորդությամբ կնքված Համաձայնագիրը չափազանց կարևոր է Հարավային Կովկասում երկարատև խաղաղության, կայունության ու զարգացման համար:

Պարզապես, հիասթափեցնողն այն է, որ Վրաստանը ոչ մի տեղ դեռևս չի երեւում այս գործընթացում: Սակայն, Վրաստանը եւս կարող էր մասնակից լինել խաղաղության գործընթացին:

Պետք է ասել, որ վերջին ժամանակներս Հարավային Կովկասում գործընթացները շատ արագ են զարգանում, շատ բան այնպես է փոխվում, որ մեզ համար դժվար է նույնիսկ հետեւել: Պարզ երեւում է, որ Ռուսաստանի ազդեցությունն Ադրբեյջանում ու Հայաստանում զգալիորեն թուլանում է, չնայած դրանում ամենամեծ մեղավորը Կրեմլն է:

Ինչ վերաբերում է Զանգեզուրի միջանցքի նկատմամբ ԱՄՆ-ի վերահսկողության հաստատմանը, ապա սա շատ լավ է ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական առումով: Պետք է նշել, որ այս միջանցքը բավական յուրահատուկ տարածք է, իբր նվազեցնում է Վրաստանի տարանցիկ գործառնությունը, ինչ համար ոչ մի պարագայում լաղունելի չէ:

Ծանոթ եմ այդ տարածքին, մեքենայով եմ անցել Զանգեզուրի միջանցքով եւ կարող եմ ասել, որ այդ միջանցքով մեծ քանակությամբ բեռներ տեղափոխելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման համար շատ ժամանակ ու միջոցներ կպահանջվեն: Դա լեռնային եւ բավական բարդ տեղանք է: Հետեւաբար, տարանցիկ ցամաքային տեղաշարժը դժվար կլինի, բայց ոչ անհնար:

Իհարկե, մի կողմից՝ Ադրբեյջան-Հայաստան, մյուս կողմից՝ Հայաստան-Թուրքիա սահմանների բացումը շատ բան կփոխի, չնայած սկզբում էական փոփոխություններ չեն լինի: Այս ամենը ժամանակ կպահանջի, բայց եթե ուզում ենք պատրաստ լինել այս

ժամանակահատվածին, Վրաստանը պետք է շտապ ակտիվացնի Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարությունը, ինչպես նաեւ Անակլիայի նավահանգստի շինարարությունը: Գիշտ է, մեր նավահանգիստները կարող են դիմակայել զգալիորեն ավելացած բեռնաշրջանառությանը, բայց շուտով հոսքերը կարող են այնքան մեծանալ, որ այլեւս չկարողանանք հաղթահարել:

Այստեղ եւս կցանկանայի ուշադրություն հրավիրել մեկ հարցի վրա. ԱՄՆ-ի կողմից Զանգեզուրի միջանցքի վերահսկողության վերաբերյալ Համաձայնագիրը հունից հանեց ռուս քարոզիչներին: Նրանց պնդումների համաձայն, Հայաստանը կորցրել է Զանգեզուրի միջանցքը: Մյուսները նույնիսկ ավելի հեռու գնացին եւ պնդեցին, որ երկիրը գրեթե կորցրել է իր ինքնիշխանությունը: Ցավոք, մենք նույն բովանդակության հայտարարություններ ենք լսել նաեւ վրացական որոշ լրատվամիջոցներից, ինչն ամոթալի է, բայց, ամենակարևորն այն է, որ դա սուտ է: Հայաստանը չի կորցրել որեւէ միջանցք կամ ինքնիշխանություն, Զանգեզուրը մնում է Հայաստանի իրավասության ներքո, հայտարարեց քաղաքագետը:

ՊԱՍՏԱ ԲԱՅՐԱԽՏԱՐԻ. «ՄԵՆՔ ՄԻՇՏ ԱՆՎԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆՔ ...»



Փորձագետ Պաստա Բայրախտարին կարծում է, որ Զանգեզուրի նախագիծը կմրցակցի «Միջին միջանցքի» հետ, չնայած Վրաստանը միշտ առավելություն կունենա ճիշտ ներդրումների շնորհիվ:

- Քանի որ մեր ուղղությունը բազմամոդալ է, ինչը նշանակում է, որ մենք ունենք նաեւ ծովային նավահանգիստներ եւ այլն, իսկ Զանգեզուրն ունի միայն ճանապարհային ու երկաթուղային ուղղություն, մենք միշտ առավելություն կունենանք ճիշտ ներդրումների շնորհիվ, - նշեց Պաստա Բայրախտարին:

ԻՐԱՎԿԻ ԳՈՐԱՎԱ. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՃԱՆՊՈՐԶ ԶԷ, ԴՐԱՆՈՒՄ ԿԱՆ ՈՒՋՄԱԿԱՆ ՇԱԳԵՐ»

«Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» թերթը հրապարակել է քաղաքագետ Իրակլի Գոգավայի կարծիքը՝ «Զանգեզուրի միջանցքը առևտրային ճանապարհ չէ, դրա-



նում կան ռազմական շահեր» վերնագրով:

- Վրաստանը ողջունում եւ դրական է գնահատում այն փաստը, որ Հայաստանն ու Ադրբեյջանը դադարեցրել են հակամարտությունը: Ինչ վերաբերում է Զանգեզուրի միջանցքին, ապա, հաշվի առնելով աշխարհագրական տեղանքը, սա շատ դժվար իրականացվելիք նախագիծ է, որից շահույթ ստանալը երկար ժամանակ կպահանջվի: Վրաստանը Ռիկոթիի ճանապարհը կառուցում է 30 տարի, եւ այն դեռևս ավարտված չէ: Զանգեզուրին 57 անգամ ավելի բարդ է, քան Ռիկոթիին: Իմ կարծիքով, Զանգեզուրին ավելի շատ ռազմաքաղաքական նախագիծ է, քան տնտեսական: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ծանրաբեռնված չէ, եւ ո՛վ է ծանրաբեռնելու Զանգեզուրի միջանցքը, - նշում է Իրակլի Գոգավան:

ՊԱՍՏԱ ՑԱԳԱՐԵԻՇՎԻԼԻ. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԳՐԵԹԵ ԽՆԴԻՐՆԵՐ ԶԻ ԱՈՒՋԱՑՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»



Ինչպես նշված է «Ռեզոնանսի» թերթում հրապարակված հոդվածում («Զանգեզուրի միջանցքի գործարկումը գրեթե խնդիրներ չի առաջացնի Վրաստանի համար» վերնագրով), վրացի փորձագետների կարծիքները Զանգեզուրի միջանցքի զարգացման վերաբերյալ բաժանված են: Ոմանք կարծում են, որ Զանգեզուրի նախագիծը չի կարող լինել Միջին միջանցքի այլընտրանք, իսկ մյուսները պնդում են հակառակը:

Օրինակ, Տրանսպորտային միջանցքի հետազոտական կենտրոնի տնօրեն Պաստա Ցագարեիշվիլին Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ բացասական կարծիք էր հայտնել դեռևս Վաշինգտոնի Հռչակագրի ընդունումից առաջ:

- Կարծում եմ, որ «Զանգեզուրը» անպայման կլինի մեր բեռները եւ կվճարի մեր նավահանգիստներին, չնայած կարծում եմ նաեւ, որ դեռ վաղ է խոսել այն մասին, թե կոնկրետ ինչ ծավալի բեռնափոխադրում կիրականացվի եւ ինչպես կարելի է պահպանել նման բեռները, - իր խոսքում ասել է փորձագետ Ցագարեիշվիլին:

«ԹԵԳԵՏԱ ՄՈՏՈՐՍԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ԱԽԱԼՑԻԽԵՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԱՐԴԱՏԱՐ ԵՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՍ ԼԻԱՐԺԵՔ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՅԻ ԱՊՐԱ


ԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ.

- ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ (ՎՈՒԼՎԱՆԻՋԱՅԻԱ)
- ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
- ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
- ՇԱՐԺԻՉԻ ՅՈՒՂԻ ՓՈԽՈՒՄ
- ԱՎՏՈՍԱՏ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՏՈՒՓԻ ՅՈՒՂԻ ՓՈԽՈՒՄ

ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ.

- ԿՑՄԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻԱՅԻ ՀԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ
- ՇԱՐԺԻՉԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՏՈՒ ՓՈԽՈՒՄ
- ԱՌՋԵՎԻ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԴԻՍԿՐԻ ՀՂԿՈՒՄ
- ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՍԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
- ՇԱՐԺԻՉԻ ՅՈՒՂԻ ԵՎ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ՎԱՌԵԼԻՔԻ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ՕԴԱՅԻՆ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ԽՑԻԿԻ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՏՈՒՓԻ ՅՈՒՂԻ ԵՎ ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄ
- ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ
- ՀՈՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄ
- ԳՈՒՐՈՇԻՈՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄ
- ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՇԵՂՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
- ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ



ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕԳՈՍՏՈՍԻ 8-ԻՅ ՇԵՏՈ ՄԵՆԷ ԱՊՐՈՒՄ ԵՆԷ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ, ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս իրողությունը նշանակում է, որ մենք գործնականում զրոյից պետք է սովորենք, թե ինչ է նշանակում խաղաղ ապրել, իմանանք, թե ինչ է նշանակում խաղաղություն, ինչպիսին է այն, եւ ինչ տեսք ունի: Սրա մասին մտածելիս է, որ հասկանում ես, որ խաղաղությունն այնպիսի տեսք ու պատկեր կունենա, ինչպիսի տեսք է պատկեր մենք նրան կհաղորդենք, ինչպիսին այն կկերտենք ու կստեղծենք, իհարկե, Ադրբեջանի հետ, եւ ոչ թե միայնակ:

Բայց փաստ է նաեւ, որ հաստատված խաղաղությունն ամենօրյա խնամք ու հոգատարություն է պահանջում, ինչպես ամենօրյա խնամք եւ հոգատարություն է պահանջում նորածին ու ոչ միայն նորածին երեխան, ինչպես ամենօրյա խնամք է հոգատարություն է պահանջում նորակառույց ու նորաբնակ տունը, ինչպես ամենօրյա խնամք է պահանջում, այո՛, նոր ու սիրելի ավտոմեքենան:

Մեր նահատակներին խնկարկելու եւ սրբացնելու, նրանց հիշատակի հետ հարաբերվելու մեր ձեւն անգամ պիտի կաթիլ-կաթիլ, միլիմետր առ միլիմետր փոխվի, որովհետեւ խաղաղությունը պետք է միխթարի որդեկորույս ծնողներին, այրիացած կանանց, կանանց կորցրած ամուսիններին, ծնող կորցրած զավակներին: Խաղաղությունը պետք է լուսավորի մեր նահատակների հոգիները, որովհետեւ ահա Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային կյանքի ավելի ու ավելի հեղինակավոր դարձող մասնակից, ավելի անկախ, ավելի



ինքնիշխան, ավելի ինքնավստահ մի պետություն, ահա սա է այն նպատակը, որի համար ընկան մեր եղբայրներն ու քույրերը եւ նրանց զոհողության սուզը պիտի հաղթահարենք խաղաղության բերկրանքով:

Վաշինգտոնյան համաձայնությունների արդյունքում, ավելի քան 30-ամյա շրջափակումից հետո, Հայաստանի Հանրապետությունն ապաշրջափակվում է, մի արդյունք, որ կարծում եմ, աներեւակայելի կարող էր համարվել ոչ հեռավոր անցյալում:

Վաշինգտոնի հռչակագրի տեսքով լիարժեք տալիս է այս հարցի պատասխանը՝ տարածքային ամբողջա-

կանություն, ինքնիշխանություն, իրավազորություն, սահմանների անխախտելիություն: Ահա այն սկզբունքները, որոնց շրջանակում պետք է տեղի ունենա ճանապարհների բացումը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Սա նշանակում է, որ հաղորդակցության ուղիների վերականգնման, կառուցման հատվածներում նախ պետք է հստակեցվի, սահմանազատվի ու սահմանագծվի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանը:

Խաղաղության տրամաբանությունը, նոր տրամաբանությունն այն է՝ ասելիս, որ ՀՀ ինքնիշխան տարածքներ կան, որ այսօր գտնվում են ադրբեջանական վերահսկողության ներքո, պետք է ասենք նաեւ, որ կան Ադրբեջանի ինքնիշխան տարածքներ, որ գտնվում են մեր վերահսկողության ներքո, եւ փոխադարձ այս հարցը պիտի լուծուն ստանա սահմանազատման գործընթացում:

Ուշադրություն դարձրեք. ներպետական, երկկողմ եւ միջազգային փոխադրումների համար երկու երկրների միջեւ հաղորդակցությունների բացում հիմնված պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ իրավազորության հարգման վրա: Ադրբեջանի Հանրապետության հիմնական մասի եւ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքով անխցընդոտ հաղորդակցություն, Հայաստանի Հանրապետության համար միջազգային ու ներպետական հաղորդակցության փոխադարձ առավելություններով,- ասված է վարչապետ Փաշինյանի ուղերձում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ. ՍՏՈՐԱԳՐԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ՝ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

Օգոստոսի 18-ին երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը Մասուդ Փեգեշքիանը:

Այցի շրջանակում, Իրանի նախագահը հանդիպումներ ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, նախագահ Վահագն Խաչատրյանի հետ, այցելեց Երեւանի Կապույտ մզկիթ եւ այնտեղ աղոթեց:

Իրանի նախագահը, Հայաստանի վարչապետի հետ մասնակցեց նաեւ հայ-իրանական գործարար համաժողովին:

Հայաստանի վարչապետի եւ Իրանի նախագահի առանձնագրույցից հետո, երկու երկրների ղեկավարները քննարկումները շարունակեցին ընդլայնված կազմով:

Ջրուցակիցները քննարկեցին Հայաստան-Իրան համագործակցության օրակարգային մի շարք հարցեր: Մասնավորապես, անդրադարձ կատարվել մի շարք ոլորտներում կապերի հետագա զարգացմանն ու ընդլայնմանը: Մտքեր փոխանակվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

Իրանի նախագահ Մասուդ Փեգեշքիանի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում Հայաստանի եւ Իրանի միջեւ ստորագրվեցին մի շարք

փաստաթղթեր: Մասնավորապես, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Իրանի նախագահ Մասուդ Փեգեշքիանը ստորագրեցին համատեղ հայտարարություն:



Հայաստանի եւ Իրանի արտաքին գործերի նախարարությունների միջեւ ստորագրվեց 2025-2027 թվականների քաղաքական խորհրդակցությունների մասին հուշագիր: Հայաստանի էկոնոմիկայի նախարարության եւ Իրանի ստանդարտների ազգային կազմակերպության միջեւ

ստորագրվեց ստանդարտացման, հավատարմագրման, համապատասխանության գնահատման, չափագիտության եւ տեխնիկական կանոնակարգման ոլորտներում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր: Հայաստանի էկոնոմիկայի նախարարության եւ Իրանի մշակութային ժառանգության, զբոսաշրջության ու

րության միջեւ ստորագրվեց մասնագիտական կրթության ու ուսուցման ոլորտում 2025-2029 թվականների համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

Համատեղ հայտարարության մեջ, մասնավորապես, նշված է, որ, հաշվի առնելով երկու երկրների ընդհանուր շահերը, Պարսից ծոց-Սեւ ծով երթուղու ամրապնդման հարցում կողմերը շեշտեցին համապարփակ տրանսպորտային համագործակցության խթանման, տրանսպորտային ենթակառուցվածքների եւ տարանցիկ ուղիների զարգացման անհրաժեշտությունը, այդ թվում՝ արագացնելով երկու երկրների սահմանին Արաքս գետի վրա երկրորդ կամրջի կառուցումը, նոր սահմանային անցակետերի զարգացումն ու արդիականացումը, ինչպես նաեւ երկու երկրների միջեւ կնքված համաձայնագրերի շրջանակում ճանապարհային վճարների նվազեցումը:

Նախագահական նստավայրում Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի եւ Իրանի նախագահ Մասուդ Փեգեշքիանու հանդիպմանը, կողմերը քննարկեցին քաղաքական, տնտեսական, մշակութային եւ բազմաթիվ այլ ոլորտներում առկա փոխգործակցային ներուժի իրացման հնարավոր ուղիները:

ԻՇԽԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ. «ԿԿԱՌՈՒՅՎԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՎԱՆ»



Համահայկական խաղերի պատշաճ կազմակերպման նպատակով, Հայաստանի կառավարության որոշմամբ, հատկացվել է տարածք հանրային-մշակութային եւ սպորտային ավանի կառուցման համար:

Ինչպես նշեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեին կտրամադրվի «Զրվեժ» անտառապարկի 23,3 հա հողամասը՝ 20 միլիարդ 900 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ ներդրումային ծրագրի իրականացման նպատակով: Ծրագիրն իրականացվելու է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, 13 տարվա ընթացքում:

Համահայկական խաղերի անցկացման ժամանակ (Ձմեռային եւ Ամառային խաղեր) մարզական ավանը

ծառայելու է որպես մարզիկների կեցության վայր: Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի ավանի սպորտային ավանի պահպանման ծախսերի ֆինանսավորումը: Համալիրն օգտագործվելու է որպես Համահայկական խաղերի անցկացման, իսկ խաղերից դուրս՝ երիտասարդական տարբեր հավաքների, Հայաստան-Սփյուռք բազմաբովանդակ միջոցառումների, հանգստի եւ ժամանցի կազմակերպման ու բազմաբնույթ ծրագրերի անցկացման վայր:

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի կողմից առաջին փուլում տեղադրվելու են էկոլոգիկ, ճաշարան եւ բժշկական սպասարկման կենտ-

րոն: Վերոնշյալ կառույցները չեն ենթադրում հիմնական շինություններ: Հաջորդ փուլերում նախատեսվում է սպորտային տարբեր հարթակների եւ մարզասրահների կառուցում: Յուրաքանչյուր տնակի համար անհրաժեշտ կլինի հարթեցնել 110-120 քառ.մ հողատարածք: Տնակների հավաքումը նախատեսվում է ոչ անտառածածկ տարածքներում:

Տարածքը հատկացվել է առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով՝ 50 տարի ժամկետով: Ներդրումային ծրագրով նախատեսվում է ստեղծել շուրջ 1240 նոր աշխատատեղ, ինչպես նաեւ տարածքում շուրջ 20 հազար ծառ տնկել:

Որոշման ընդունումը բխում է ՀՀ «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» եւ «Մանկապատանեկան սպորտի մասին» օրենքների պահանջների կատարումից:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

26.08.2025 Սուրբ Գովակիմի եւ Աննայի՝ Սուրբ Աստվածածնի ծնողների եւ Յուդաբեր կանանց հիշատակության օր



28.08.2025 Սուրբ Երեմիա մարգարեի հիշատակության օր

30.08.2025 Սուրբ առաքյալ Թովմասի հիշատակության օր

31.08.2025 Հիշատակ Սուրբ Աստվածածնի գոտու գյուտի Սուրբ Աստվածածնի գոտու գյուտը Տիրամորը նվիրված Հայ Առաքելական Եկեղեցու յոթ տոներից է: Մի հանգամանք, որն ակնհայտ կերպով ընդգծում է Սուրբ Կույսի՝ հայ ժողովրդի հոգեւոր կյանքում ունեցած կարեւոր եւ նշանակալից տեղը ու դերը:

ղն ու դերը:

ՍՊՅՈՒՆԿԱԿԱՆ

ՈՐՈՇ ԲԱՐԱՔԱՅԻՆԵՐ ԻՉ ԲԱՐՏԵՐԸ ԿԱՏԱՆԱՆ ԶԵՂՉՎԱԾ ԳՆՈՎ



Վրաստանի արդարադատության նախարարության Պետական ծառայությունների զարգացման գործակալությունը հայտարարել է քաղաքացիների որոշակի կատեգորիաներին զեղչված գնով էլեկտրոնային նույնականացման քարտ (ID քարտ) տրամադրելու մասին, որը կշարունակվի մինչեւ սեպտեմբերի 5-ը:

Գործակալության հաղորդմամբ, փաստաթուղթը կտրամադրվի կես գնով 10-րդ աշխատանքային օրը, իսկ փաստաթղթի համար անհրաժեշտ լուսանկարը կլինի անվճար: Ըստ Ծառայությունների զարգացման գործակալության, այս նախաձեռնության նպատակն է քաղաքացիներին տրամադրել էլեկտրոնային փաստաթղթեր եւ բարելավել ընտրողների ցուցակները: Ձեռնի հնարավորությունից կարող են օգտվել հետեւյալ անձինք.

* չափահաս քաղաքացիներ, որոնք երբեք չեն ստացել էլեկտրոնային նույնականացման քարտ/,

* չափահաս քաղաքացիներ, որոնք էլեկտրոնային նույնականացման քարտը չեղարկվել է ժամկետանց լինելու պատճառով կամ

կչեղարկվի մինչեւ այս տարվա հոկտեմբերի 5-ը, եւ չունեն վավեր կենսաչափական անձնագիր/, քաղաքացիներ, որոնք մինչեւ հոկտեմբերի 5-ը կդառնան 18 տարեկան, եւ որոնք էլեկտրոնային նույնականացման քարտը չեղարկվել է ժամկետանց լինելու պատճառով կամ կչեղարկվի մինչեւ հոկտեմբերի 5-ը, եւ չունեն վավեր կենսաչափական անձնագիր/, քաղաքացիներ, որոնք մինչեւ հոկտեմբերի 5-ը կդառնան 18 տարեկան եւ չեն ստացել էլեկտրոնային նույնականացման քարտ:

Նույնականացման քարտի համար պետք է դիմել Պետական ծառայությունների զարգացման գործակալության տարածքային գրասենյակ, Արդարադատության տան մասնաճյուղեր եւ «Արդարադատության շարժական տուն»:

ՄԱՅՐԱՔԱՆՈՒՄ



ԿԱՆԱ ԿԱԼԱԶԵ. «35 ՏԱՐԻ ԱՆՑ ՏՐԱՄՎԱՅԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԹԲԻԼԻՍԻ»

Թբիլիսիի տրամվայը՝ Կոնկան, ամենահինն է Կովկասում, այն գործարկվել էր 1883 թվականին: Քաղաքի տրամվայի համակարգը էլեկտրաֆիկացվել է 1904-1905 թվականներին եւ գործել է 123 տարիների ընթացքում՝ մինչեւ 2006 թվականը:

Այն ժամանակվա քաղաքապետ Գիգի Ուզուլավայի օրոք որոշվեց Թբիլիսիի դարձնել առանց տրամվայի քաղաք, ինչպիսին Երեւանն էր դարձել 2004 թվականին: Թերեւս, 25 տարի անց, փոխադրամիջոցը վերադառնում է մայրաքաղաք:

- Նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ կիրականացվի տրամվայի նախագիծ: Այսօր մենք հայտարարում ենք տրամվայի գծի նախագծի եւ շինարարական աշխատանքների զննման մրցույթ,- այս մասին քաղաքային խորհրդի նիստում ասաց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

Կախա Կալաձեի խոսքով՝ ժամանակակից, եվրոպական չափանիշներին համապատասխան տրամվայի գիծը կկապի Դիդի Դիդոմի բնակավայրը Դիդոբե մետրոյի կայարանի հետ: Տրամվայի գիծը կլինի 7,5կմ երկարությամբ եւ կներառի 11 կանգառ:



ժամկետ հեռանկարում, շատ ավելի արդյունավետ կլինի, քան հասարակական տրանսպորտի մյուս տեսակները:

ՍԱՆՈՒԿ ԿԱՐԻՆՅԱՆ

«Վրաստան» թերթի խմբագրակազմը վշտակցում է թերթի աշխատակցուհի Մարինե Աշխատուրյանին, սիրելի եղբոր կնոջ, 70-ամյա Ասյա Միրզայի ՄԱՅՐԱՔԱՆ-ԱՇԽԱՏՈՒՅԱՆԻ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին, մերձավորներին ու բարեկամներին:



7x7 grid with numbers 1-51 scattered in various cells.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 2.Գաճաճ պետություն եվրոպայում: 8.Բանջարանոցի գետը: 9.«Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բարն եմ սիրում, Մեր հին սագի ողբանվազ, ... [արն եմ սիրում» (Ե.Չարենց): 1.Երաժշտական խումբ Հայաստանում, Երեւանում ... Բենդ: 12.Ե՛վ ամերիկացի գրող Տվենը, Ե՛լ հայ արձակագիր Արենը (անունը): 14.«... տվեց ինձ յուր քնարը, Որպես փարատիչ տրտում ցավերիս» (Մ.Նալբանդյան): 16.Սրա, դրա, ...: 18.Ռումինական դրամը: 19.Պտուղ, միրգ: 20.Շշի փականը: 21.Արեւ, արփի, արեգակ: 23.Դաշնակ Դրաստանատ Կանայանի կեղծանունը: 24.Շվեյցարիայի մայրաքաղաքը: 26.Քաղաք Վրաստանում: 27.Արեգակնային համակարգի մոլորակներից: 29.Երանի, երեկ, ...: 30.Գիշերային թռչուն: 33.Հայ մեծ կոմպոզիտոր ... Մանսուրյան: 35.Դիլ..., Վագ...: 36.Դանիացի հանրահայտ ֆիզիկոս: 37.«... է, Անուշ, ներս արի դագեն, Ի՞նչ ունես ջախել չորանների հետ» (Հովի.Թումանյան «Անուշ»): 38.Ստորադասական շաղկապ: 40.Ծնողներից զրկված, անտեր, ծնողազուրկ: 42.Խիտ, վայրի ծառերով ու բուսականությամբ ծածկված: 43.Մագի ներկ: 44.... 8՝ Կանանց միջազգային տոն: 45.Ճակատի կնճիռ: 46.Երգչուհիներ Ե՛ւ Եգանյանը, Ե՛ւ Թաշչյանը: 47.Կաթնամթերքի տեսակ: 49.Գիքորի քույրը:

50.Հովհաննես Շիրազի բանաստեղծություններից: 51.Գետ Հնդկաստանում: ՈՐՈՇԱՅԻՆ. 1.Ե՛վ Լեւոնյանը, Ե՛լ Պուգաչովան: 2.Որեւ առարկայի էլեկտրական էներգիայով օժտել: 3.Լեւինի քաղաքը: 4.Արեւմտահայ բանաստեղծ: 5.Եվրոպական երկիր: 6.Վիրահայոց թեմի լուսահոգի առաջնորդ ... Այվազյան: 7.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված մեծ դրամատուրգը: 10.Պեպոյի ձկնորս ընկերներից: 13.Բերդամրոց Վրաստանի Ախալցխեթ քաղաքում: 15.Պարզալ, թռչկոտել: 17.Դպիր, ուսուցչապետ: 20.Թատրոնի եւ կինոյի հանրահայտ դերասան ... Աբրահամյան: 22.Եկեղեցու բակը: 23.Ֆրանսիացի գրող, լուսավորիչ, փիլիսոփա: 24.Տանը կից ցանկապատված տարածք: 25.Օժանդակ բայ: 28.«Դավիթ բեկ» պատմավեպի հեղինակը: 30.Քաղաք Ֆրանսիայում: 31.Շաբաթվա օր: 32.Հերոս Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը»: պոեմում: 33.Հայկական ավանդական ուտեստ: 34.Տուֆով հայտնի քաղաք Հայաստանում: 36.Ամերիկյան օդանավաչինական ընկերություն: 39.Վերջ, վախճան: 41.Հայոց թագավորներից: 48...., մի մնա: 49.Մաշտոցյան այբուբենի 6-րդ զինվորը:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ճամբորդ: 9.Ուռեկի: 10.Ծերտ: 11.Սալոնիկ: 13.Քլունց: 16.Ռուն: 17.Վախ: 19.Կրկին: 22.Լորտու: 24.Կաբուկի: 25.Արշո: 27.Սաախով: 29.Պահանջ: 32.Այովա: 33.Կալանք: 35.Սեղք: 38.Ձեկ: 40.Հոր: 41.Քասկ: 44.Կան: 46.Խլել: 49.Ուղի: 51.Իներտ: 52.Սաստիկ: 55.Լողը: 56.Ազա: 57.Կին: 58.Կոկ: 59.Տրական: ՈՐՈՇԱՅԻՆ. 1.Գամառ: 2.Ափիոն: 3.Արծիվ: 4.Սուտք: 5.Լեզու: 6.Հինգ: 8.Դեկան: 12.Լուվր: 14.Լիբր: 15.Նշիկ: 18.Սուրո: 19.Կաքավ: 20.Կուրա: 21.Նիցե: 23.Տախտակ: 26.Շվաք: 28.Առաջ: 29.Պոզ: 30.Համ: 31.Նեղ: 34.Լեզենդ: 36.Երկ: 37.Քան: 39.Տաղ: 42.Սուտակ: 43.Կիսատ: 45.Արինա: 47.Լիոն: 48.Լերկ: 50.Հսկա: 53.Տիկ: 54.Կոն:

Վրաստանի խմբագիր, տնօրեն՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Վլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՐՈՍՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՐՅԱՆ

ՀՀՅԾԾ ԶՈՆԱՅՅԻՄՈ: ՄԶՈԼՈՏՈ 0105, Զ.ՅՈՒՐԵՅԻՄՈՅ ՄՅՅԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՊԸ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» իրատարակչություն

«ՅՐԱՆԹՅԵՆ»
ՄԶՈԼՈՏՈՅ, ՆԱՅՅՐՈՄՅԵԼՈՒ
«ՅՐԱՏԱՆ»
ТБИЛИСИ, ГРУЗИЯ
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445
Պարբերականում օգտագործվել են վրացական, հայաստանյան, օտարերկրյա մամուլի, ինչպես նաեւ տեղեկատվական գործակալությունների եւ համացանցային ծառայությունների կողմից հրատարակված տեղեկությունները: Խմբագրության ղեկավարը կարող է չհամընկնել հեղինակների կարծիքի հետ: